ՀՀ Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքի ղեկավարի 2012 թ-ի 1-ին կիսամյակի աշխատանքային գործունեության հաշվետվություն

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

- Կատարել եմ համայնքի բնակիչ հանդիսացող 108 անձանց ընդունելություն, քննարկել բոլոր դիմումները, որոնցից 56-ին տրվել է դրական լուծում:
- Տարբեր միջնորդություններով հանդես եմ եկել կադաստրի տարածքային ստորաբաժանմունքում, նոտարական գրասենյակում, ոստիկանական բաժանմունքում, մարզպետարանում և այլուր:
- Աշխատակազմի միջոցով համայնքի 98 ընտանիքներ ընդգրկվել են «Փարոս» համակարգում՝ «Ընտանեական նպաստ» ծրագրում:
- Սոց օգնության ծրագրի շրջանակներում տրամադրվել է 1 000 000դրամ համայնքի առավել անապահով ընտանիքներին:

Ֆինանսների բնագավառում

- Աշխատակազմի միջոցով ապահովել եմ համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների հավաքագրումը, տնօրինել բյուջեի միջոցները՝ ապահովելով դրանց նպատակային օգտագործումը, ստորագրել բոլոր ֆինանսական փաստաթղթերը:
- Կազմակերպել և աշխատակազմի միջոցով իրականացրել եմ 2012թվականի 1-ին կիսամյակի համար նախատեսված

գույքահարկի գանձումը	-	1 348 000 դրամ
հողի հարկի գանձումը	-	450 300 դրամ
ոչ հարկայինեկամուտներ	-	260 000 դրամ

Պաշտպանության բնագավառում

- Կազմակերպել և անցկացրել եմ համայնքի ազգաբնակչության 1 սեմինար դասընթաց և 1 գործնական վարժանք համայնքի քաղ.պաշտպանության պլանի և արտակարգ իրավիճակներում բնակչության տեղահանման սխեմայի սահմաններում:
- Համապատասխան որոշումներով և կարգադրություններով վերանայվել և համալրվել է նախատեսված ջոկատների և օղակների կազմերը,կատարվել են անհրաժեշտ տրանսպորտային, տեխնիկական, կապի և այլ միջոցների ու նյութական պարագաների տեխզննման և ստուգման աշխատանքները:

Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

- Համայնքապետարանի ամենօրյա հսկողության շնորհիվ համայնքի բոլոր ընտանիքներում տեղադրված են համապատասխան հաշվիչներ և ազգաբնակչությունը ապահովված է 12-ժամյա ջրամատակարարումով:
- Վերակառուցվել է 952 մ ոռոգման ջրագիծ:
- Համայնքապատկան շինության կապիտալ վերանորոգման համար հատկացվել է 1 200 000դրամ:

Տրանսպորտի և կապի բնագավառում

- Ապահովել եմ համայնքում հաշվառված տրանսպորտային միջոցների գույքահարկի գանձումը, նպաստել տեխ.զննման աշխատանքներին:
- Համայնքի տարածքում պարբերաբար գործում է «ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ» շարժական կայանը:

Առևտրի և սպասարկման բնագավառում

- Աշխատակազմի միջոցով կատարվել է համայնքում գործող բոլոր առևտրի կետերի ստուգում և տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի 6 թույլտվություն:

Հասարակական կարգի պահպանման բնագավառում

- Մշտական աջակցություն ենք ցուցաբերել համայնքի վարչական տարածքը սպասարկող ոստիկանության աշխատակիցներին հասարակական կարգը պահպանելու, վարչական և քրեական իրավախախտումները բացահայտելու և կանխելու նպատակով:
- վարչական իրավախախտումների վերաբերյալ համայնքապետարանում քննարկվել է 2 իրավախախտման դեպք և տրվել է համապատասխան լուծում:

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

- Համայնքի հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաներն համապատասխան համայնքի ավագանու հաստատմանն եմ ներկայացրել համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային եղանակով օտարելու, օտարման մեկնարկային գին,աճուրդային քայլի չափ և այլ պայմաններ սահմանելու մասին որոշման նախագծերը:
- Անմիջական վերահսկողություն եմ սահմանել համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ և շարժական գույքի պահպանման նկատմամբ, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող հողերի պահպանմանը, դրանց օգտագործմանը, ըստ նպատակային նշանակության:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

- Աջակցել եմ համայնքի միջնակարգ դպրոցի բնականոն գործունեությանը, դպրոց հաճախելուց խուսափող աշակերտների և նրանց ծնողների հետ տարել բացատրական աշխատանքներ,հետևել ուսման որակի և կրթամակարդակի բարելավմանը:

- Մանկական երաժշտական դպրոցի և մանկապարտեզի բնականոն գործունեության համար համայնքի բյուջեից կատարվել է ֆինանսավորում՝ 4 849 800դրամի չափով:

- Հետևել եմ մանկական երաժշտական դպրոցի և մանկապարտեզի գործունեությանը:

Առողջապահության, ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում

- Օժանդակել եմ բուժ.ամբուլատորիայի բնականոն գործունեությանը, որտեղ համայնքի բնակիչները ստանում են որակյալ բուժզննում և բուժօգնություն:
- Աջակցել եմ համայնքի բուժ. ամբուլատորիայում կազմակերպված ակնաբուժական հետազոտությանը, որը համայնքի ազգբնակչության համար կազմակերպել էր <<Հայաստանի մանուկներ>> բարեգործական հիմնադրամը՝ անվճար հիմունքներով:
- Օժանդակել եմ համայնքում գործող «Ֆրանսիական բոքսի» պարապմունքների անցկացմանը: Խմբակի սաներից մի քանիսը մարզային , հանրապետական և միջազգային մրցաշարերում գրավել են մրցանակային տեղեր:

Գյուղատնտեսության բնագավառում

- Աջակցել և խիստ հսկողություն եմ սահմանել համայնքում առկա բոլոր տեսակի անասունների և թռչունների վակցինացման աշխատանքների կատարմանը:
- Համայնքի վարչական տարածքում տեղակայվել է 2 հակակարկտային կայաններ:

Լեռնագոգ համայնքի ղեկավար՝ Ս.Մարգարյան

Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքի ղեկավարի 2012 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքային գործունեության հաշվետու ժողովի

Արձանագրություն

11.07.2012թ. գ.Լեռնագոգ

2012թ. հուլիսի 11-ին ժամը 12.00-ին կայացավ Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքի 2012 թվականի գործունեության հաշվետու ժողովը, մասնակցությամբ ավագանու 5 անդամների, համայնքի ղեկավարի, աշխատակազմի 12 աշխատակիցների, համայնքի 60 բնակիչների, միջնակարգ դպրոցի տնօրենի և 8 ուսուցիչների, մարզպետարանի ֆին. բաժնի պետ՝ Հովհաննես Հարությունյանի,

նախագահությամբ՝ համայնքի ղեկավար Ս.Մարգարյանի

քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Ա.Դավթյանի

Օրակարգում

1. Լեռնագոգ համայնքի ղեկավարի 2012թվականի 1-ին կիսամյակի աշխատանքային գործունեության հաշվետվությունը:
/Զեկ համայնքի ղեկավար Ս.Մարգարյան/

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ

2. Լսեցին -- Լեռնագոգ համայնքի ղեկավարի 2012 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքային գործունեության հաշվետվությունը՝ հարցի շուրջ համայնքի ղեկավար Սարգիս Մարգարյանի զեկույցը:

Ժողովի նախագահ՝ Ս.Մարգարյան

քարտուղար՝ Ա.Դավթյան